Եւ ըստ այնմ բոլորովին աւարտելով շինութեան թերութիւնը՝ Աստուծոյ յաջողութեամբն յ8-ն նոյեմբերի՝ նոյն 1887 ամի, արժանավայել հանդիսիւ օծի զտաճարն սուրբ Ստեփաննոսի, և սկսաւ ժամերգութիւն 'ի միխիթարութիւն Սաղիանի ժողովրդոց և բոլոր նուիրատուաց՝ մանաւանդ Բագուեցւոց, որոց ամենից ինչպէս նախքան զօծումն՝ գործակալաց միջոցով՝ գրութեամբս հրաւիրէլ էի ներկայ գտանել օծման հանդիսին և միխիթարուիլ հոգեորապէս և ուրախակից լինիլ մեզ, նոյնպէս և յետ օծման՝ դարձեալ գրութեամբս աւետեցի ամենքին 'ի միամտութիւն և 'ի բաւականութիւն. և յանդորրութիւն սրտի նորին Վեհափառութեան յայտարարութեամբս 'ի 25-ն նոյն նոյեմբերի համար 151, միամտեցուցի տաճարիս օծման մասին, նըմանապէս և Սինօդին 'ի 11-ն նոյն նոյեմբերի համար 111. յայտնեցի զօծմանէն։ Այսպէս վերջացաւ Սաղիանի վանքի շինութիւնն՝ որ շարունակուել էր 1878 թուից՝ համաձայն հրամանի Սինօդի 'ի 18 հոկտեմբերի 1878 ամի, համար 2422. Գերապատիւ Թադէոս Արք եպիսկոպոս նախորդիս աշխատութեամբն ծախսուելով 9671 բուբլի 13 կոպ. և իմ ժամանակս՝ 1633 բ. 80 կոպ. ամենն 'ի միասին 11,304 բուբլի 93 կոպ. դրամ։

'Ի տոմարին նուիրատուութեան ժողովրդոց վիճակին Զամախուոյ վասն նորոգութեան սուրբ Ստեփաննոսի վանից Սաղիանի, տուեալ 'ի Մատթէոս Կաթուղիկոսէ Գէորգ եպիսկոպոսի կառավարչի թեմին Հայոց Զամախուոյ 'ի 25 դեկտեմբերի 1861 ամի, գրեալէ.

«1862 համար I. յունվարի 1. յօգուտ շինութեան և միանդամայն վերանորոգութեան սրբոյն Ստեփաննոսի նախավկայի վանուցն նուիրեցի երեք հարիւր մանէթ 'ի միխիթարութիւն և յորդոր բարեպաշտոն ժողովրդոց տեղւոյդ։ Վաղարշապատ։ Մատթէոս կաթուղիկոս ամենայն Հայոց. — (300)։

Որպէս երևի, գործն սկսելէ Դանիէլ Արք-եպիսկոպոսն, թէ և ասմարն Գէորգ եպիսկոպոսի անունովն է տուած. ինչպէս և Մատթէոս կաթուղիկոսի կոնդակն է յանուն Գէորգ եպիսկոպոսի 'ի 15-ն դեկտեմբ. 1861 ամի համար 671, որէ ըստ այսմ.